

ԲԱԺԱՆՈՐՊ ԱԳՐՈՒԹԻՒՆ  
 ուղարկող համար 10 Ձր.  
 Վեցամսայ 5 »  
 Երեսամսական համար 12 »  
 Վեցամսայ 6 »  
**ԿԱՆՈՒՄՆԻ ՎՃԱՐԵԼԻ**  
 —) —  
 Գրութեան և ծանուցումների  
 —) —  
 Երեսամսական տարի 20 սան-  
 քիս և ևրեքիս ամի ամ-  
 ցամեկուս համար 20 ժո  
 գեղ իրարայ :

# ՇՆԱԲԱԹ

հասակ և գրաւ որիկ  
 Խմբագրութեան հասցեից

Редакция на вѣстникъ  
 «Шаржумъ»  
 Варна.  
 Redaction du journal  
 «Charjoun»  
 Varna (Bulgarie)

## ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇՆԱԲԱԹ ՕՐԵՐԸ

( ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ )

( ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ )

ՊԱՏԱՍԽԱՆՍՈՒ Յ. ՍՈՒԲԻԱՍԵԱՆ

### ԼԱՅԻ ԺՈՂՈՎԸ

Մայիսի 6ը կը մտնենայ :  
 Աշխարհի քաղաքական ու զին-  
 նուորական ուժերը շուտով կեր-  
 թան հաւաքուիլ Լահէ, զէնքերը  
 վար դնելու և երկրագնդի վրայ  
 մշտական խաղաղութիւն հաստա-  
 տելու միջոցներուն վրայ խոր-  
 հելու համար :  
 Վերջապէս զինուած եւրոպան  
 և նոյն իսկ հնչողադոյն միասին-  
 ները պաշտօնապէս կը յայտարար-  
 րեն թէ ներկայի յարաճուն զին-  
 նուորականութիւնը մարդկային  
 ազգի գրկին մէջ՝ անոր կաթովը  
 սնանդ հրէջ մըն է, որ կը սպառէ  
 մարդկութեան ուժերը :  
 Ահա այդ ամենուն վերջ մը  
 տալու, կամ աւելի ճիշդը սոհ-  
 ման մը դնելու, տեն՝ անքով սար-  
 քուած է Լահէի Վեհաժողովը :  
 Սակայն դժբաղդութիւնը հոն  
 է որ տակաւին բիրտ «ուժ» սն-  
 ձարձակ կը տիրէ իրաւունքին :  
 Աշխարհի բացարձակ տէրերը  
 ժողովուրդները չեն, այլ վառօգն  
 ու զնդակը :  
 Խաղաղասիրական բնութիւն  
 ունենալ կարծուող այս վեհաժո-  
 ղովին ա՛լ պիտի մասնակցին մի-  
 այն այն ազգերը, որք բանակներ,  
 աւերիչ հրազէններ ունին և որք  
 արդէն կը վայելեն որոշ խաղա-  
 ղութիւն :  
 Թէ ի՞նչ թաքուն նպատակներ  
 կան այդ ժողովը գումարելու մէջ,  
 թէ ո՞րքան կարելի է յոյս դնել  
 անոր արգելաւոր յաջողութեան  
 վրայ, այդ չենք գիտեր : միայն  
 սա գիտենք թէ երբ խնդիրը կը  
 վերաբերի ազգերու բարօրու-  
 թեան, համաշխարհային խաղա-  
 ղութեան, բնա՛ւ կարելի չէ հա-  
 շիւէն դուրս ձգել նաեւ հայն ու  
 Հայաստանը :  
 Արդէն «ճարժում» իր անցեալ  
 համարներով յայտարարեց թէ  
 Ամերիկա և ուրիշ տեղեր՝ հայե-  
 բու մէջ շարժում մը կը տիրէ մի-  
 թիւնկներ չաղմակերպելու և հայ  
 ազգի պահանջները անգամ մըն  
 ալ յիշեցնելու և արդարական գիւս-  
 նագիտութեան :  
 Կը հաւնինք այդ գեղեցիկ գա-

ղափարին : Թանկագին է բոլորն :  
 նպատակաւորմար է նաև միջոցը,  
 մանաւանդ անոնց համար, որոնք  
 աւելի փայլուն յոյսեր կը տածեն  
 գիւսանագիտական յաջողակնե-  
 բու վրայ :  
 Իսկ հայ ժողովուրդը, թէեւ իր  
 փրկութեան յոյսը ամենէն աւելի  
 իր սեփական բազուկներու ուժին  
 վրայ դրած է, սակայն երբէք  
 չարհամարհեր նաեւ այն միջոց-  
 ները, որոնք մղում կուտան իր  
 վեհաժողին նպատակին իրագոր-  
 ծուելուն :  
 Թող ազգային միթիւններ սար-  
 քուին արտասահմանի ամէն մէկ  
 անկիւնը, ուր աի մը հայ կայ :  
 Այժմ մեր Պատրիարքական գա-  
 հին վրայ ներսէսներ, Իլմիր-  
 լիաններ չկան : Այժմ Հայաստանի  
 անտաղ ժողովուրդը ամէն ժա-  
 մանակէ աւելի հալածուած ու  
 կաշկանդուած է : Անիկայ ոչ կա-  
 ըողութիւն և ոչ միջոց ունի իր  
 նուազած ձայնը հասցնելու եւրո-  
 պայի հզօր գիւսանագէտներուն :  
 Այդ պարտականութիւնը կը ծան-  
 րանայ արտասահմանի հայերուս  
 վրայ :  
 Բարձրացնենք մեր ձայնը ի  
 նպատակ մեր արեւակիցներուն,  
 պահանջելու համար անոնց մասն  
 ու իրաւունքը համաշխարհային  
 բարօրութեան :  
 Թող համոզուած ըլլանք թէ  
 հիմա մեր գիւսուած աւելի ազգու-  
 պիտի ըլլայ, մանաւանդ անոր  
 համար, որ մենք այժմ կղերա-  
 կանի սքեմով, զուտ պաղատական  
 աղել սագրով մը պիտի չընե-  
 կայանանք : Այլ պիտի ցոյց տանք  
 մեր վերաւոր կուրծքերը ու  
 Հայաստանի կարմրաներկ ժայ-  
 ուերը, և անոնց կանանց սեղանին  
 վրայ պիտի դնենք մեր առած  
 անթիւ զոհերուն ցանկը : Պիտի  
 յիշեցնենք իրենց թէ մեր վի-  
 ճակը աւելի վատթարացած է,  
 աւելի դառնացած է իրենց այն-  
 քան հանդիսաւոր խոստումներէն,  
 Պերլինի դաշնագրէն, 95ի վեր-  
 ջին ճրագրէն յետոյ : Պիտի յի-  
 շեցնենք Լահէի Զէնընկեցու-  
 թեան Վեհաժողովին թէ ի՞նք և  
 իրեն նմանները երբէք պիտի  
 չը հասնին իրենց բարեմիտ նպա-

տակներուն, քանի որ արիւնլուայ,  
 սովատանջ Հայաստան մը կայ,  
 քանի որ արդի սեւ պայմաննե-  
 բու մէջ ազգերու ստիպուած հայ  
 ժողովուրդ մը կայ :  
 Պիտի յիշեցնենք իրեն թէ՛  
 եթէ նոյն իսկ յաջողի զինութեան  
 ընել Եւրոպայի ստուար բանակ-  
 ները և լռեցնել անոնց արշակող  
 թնդանութները, հայ ազգը եր-  
 բէք պիտի չը դադարի պահանջել  
 իր սրբազան իրաւունքները : Եր-  
 բէք պիտի չը դադարի զէնք վեր-  
 ցընելէ, եթէ շարունակեն թոյլ  
 տալ որ քուրտն ու չէրքէլը հա-  
 յու ձեռքէն խլեն անոր հացը, և  
 արիւնուշտ թուրքը շարունակէ  
 մերթիւ անոր զուակները փողոց-  
 ներու սալախատակներուն վրայ :  
 ՎԵՏԱ

### ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Այի Բաղնիշիս, 2 Ապրիլ  
 ԵԳԻՊՏԱՆԻ ՆՈՐ ՀԱՆՊԻՍԸ  
 Հանրօգուտ շատ մը ձեռնարկ-  
 ներու պէս հրապարակագրու-  
 թիւնն ալ մեծ բազմ մը չէ գտած  
 եզրկատահայ գաղթականութեան  
 մէջ, որ ցարգ քանի մը թեր-  
 թեքու տարածամ «հողոց» կար-  
 դացած է : Սակայն նախընթաց  
 փորձերու այդ վճռական դժբաղ-  
 դութիւնը, հակառակ վհատեցնե-  
 լու նոր թեկնածուները, կարծես  
 աւելի փորձութեան միջոց նոյն  
 իսկ այնպիսիներ, որոնք ասպա-  
 ըէլէն չեն : Եւ սպայս վերջին  
 թերթին «Փարոս»ի դադարումէն  
 ի վեր, որ տարիի մը կը մտնե-  
 նայ, թէ Գահիրէի և թէ Ալեք-  
 սանդրիայի մէջ չը պակսեցան նոր  
 մը հրատարակելու մարմանէն  
 ստանդուողներ : Ատոնցմէ մէկն  
 էր զէյթունցի հանրածանթ ու-  
 սուցիչ Պ. Սմբատ Բիւրատ, որուն  
 վերջապէս վիճակուած է եղեր իր  
 երազակիցները գործնականօրէն  
 կանխելու բարեբաղդութիւնը :  
 Կամ դժբաղդութիւնը. վճիւ մը,  
 զոր ապագան պիտի յայտնէ :  
 Արդէն ամիսներ առաջ իմա-  
 ցած էինք Գահիրէի մէջ իր խմբ-  
 բազրական նախապատրաստու-  
 թիւնները, որոնց է՛ն հետաքրք-

րական էր «ուէքլամ»ի մը փու-  
 թով տարածայնուած՝ թերթին  
 անունը, «Շանթ» : Իսկ այսօր կը  
 ստանանք առաջին թիւը, որ սա-  
 կայն «Փիւնիկ» անունը կը կրէ :  
 Կերեւի թէ նիւթական կանխոյթ  
 մը ապահովելու անյաջողութիւնը  
 թերթուրած է իրեն, առասպելա-  
 կան երկարակեաց թռչունին ա-  
 նունը, անով գէթ երաշխաւորե-  
 լու յարատեւութիւնը իր ձեռ-  
 նարկին : Ինչ ալ ըլլայ վերջին  
 պահուն կատարուած այս փոփո-  
 խութեան բուն շարժառիթը, գոհ  
 ենք որ աւելուրդ սրտագոյն մը  
 կազմակերպեց ժողովուրդը, որու  
 գլխուն արգէն բազում շանթերը  
 տեղացին՝ Աստուծոյ և մարդոց :  
 Առաջին թիւէն իսկ թերթին  
 արտաքին փայլը արդէն կը ցու-  
 ցընէ՝ որ գործը կանխաւ նորըն-  
 ծայ հրատարակիչին մասնաւոր  
 զուրգուրանքին առարկայ եղած  
 է : սակայն որչափ ալ հրապուրիչ  
 ըլլայ հանգէսը իր նկարէն կող-  
 քով ու ընտիր թղթով՝ մենք կը  
 սպասէինք պարզ թերթի մը, որ  
 գոնէ շարժը անգամ մը լոյս  
 տեսնելով, պրպաւէր գաղթակա-  
 նութեան առօրեայ կեանքը, որ  
 այնքան պէտք ունի հրապարա-  
 կային յաճախակի քննադատու-  
 թեան : Մինչդեռ կիսամտեայ հան-  
 դէս մը, որքան ալ կատարեալ ու  
 կանոնաւոր ըլլայ, պիտի չը կրնայ  
 երբէք լիովին կատարել այն ա-  
 ւելակշիւ դերը, մանաւանդ որ  
 ծրագրին ալ քիչ մը ճապարած է,  
 առանց նկատի առնելու իր փոքր  
 ծաւալը և ուժերու սակաւութիւնը :  
 «Գիտական նորութիւններ»  
 ու թարգման մանրամասնութիւն-  
 ներ, հոշակաւոր երկրախոյններու  
 երկերէն քաղուածները իրենց  
 անժխտելի շահեկանութիւնը ու-  
 նենալով հանդերձ, օգտակարու-  
 թեան տեսակէտով շատ վար կը  
 մնան ներկայիս այն բաղնիքիսի  
 պէտքերուն քով, որոնց գոհա-  
 ցումը նախ կը պահանջուի մաս-  
 նաւորապէս «ժողովուրդին յատ-  
 կացում» հրատարակութեան մը :  
 Դեռ անցեալները Ալեքսան-  
 դրիայէն համարելի գրիչ մը  
 «Շարժում»ի մէջ գիտել կուտար :

«Եզրպատու հայութեան այն մասը կը կազմէ, որու վրայ համեմատաբար քիչ կը խօսուի ու քիչ կը գրուի մեր մամուլին մէջ»։ Եւ իրօք նեղուսի արեւելեան վրայ նեղուսած հայութեան այս խոշոր մէկ հատուածը տակաւ մուտքով թեան տրուելով՝ լքուած ճակատակարարի հոսանքին, այնչս փմիւսն ծանօթ է որչափ ոեւէ «կէս-ճանօթ ժողովուրդ» մը։ Ուստի եզրպատուսայ պարբերականի մը երկրպագուն պարտքն է իր ակնարկը ուղղել եղկ կլիմայի և մեղկ միջավայրի մը փորձանքներուն մատնուած այս տարաբաղդ հասարակութեան վրայ, և լրջօրէն վերլուծել լճացած կեանքը անոր բոլոր խաւերուն, սկսեալ ազնուականի սեթեւեթով ու միմոսական հասկումով՝ Եւրոպական գլխարկներու տակ իրենց սնամէջ գլուխները պտուղացնող մեր զարգացած երիտասարդներէն, սրճարաններու ծխոս մթնոլորտին մէջ՝ նարտի սեղանի մը շուրջ կամ անկիւն մը զլուխ գլխի մինչև վերջին կանթեղին շիջումը հըսկող անգործ զարկաներու խրմբակներէն, մտայն խցիկներու մէջ անտես հիւժոյթ թշուառ ընտանիքներէն, մինչև գինեատունի մը աւերիչ սփոխանքին անձնատուր և կամ հեռուոր մթին գոհհնարու խայտառակութեանը մէջ կեանքերն ու բարոյականներն թունաորոյ խեղճ ինկածները։

Յիրուսի, «Փիւնիկ» զգալով այս նիւթին կարեւորութիւնը արգէն իր ծրագրերն առաջին յօդուածին մէջ անցուցած է զայն, բայց մենք դարձեալ կը կրկնենք որ 16 միջակ էջերէ բաղկացած կիսամսեայ հանդէս մը՝ դեռ ե-

զիպտոսի կրթական, եկեղեցական և ազգային ուրիշ խնդիրներու հետ՝ այսչափին հազիւ կըրնայ հասնիլ խղճմտօրէն։ Ուստի քիչ մը անակղի թուեցաւ մեզի առաջին թիւէն իսկ ամբողջ էջեր շուրջը եզրպատուսայ հնախօսութեան, ստանաւորներու և մանաւանդ մահազգերու, որոնք իրենց այժմէութիւնն ալ կորսընցուցած են։ Անշուշտ չէինք կըրնար պահանջել որ գրեթէ միակ խմբագրին գրչէն ելած այն առաջին թիւը, կուտարեթեան նմուշ մը ըլլար և մեր յիշած թերթի թիւներն ալ փորձառութեամբ ու նոր ուժերու յուելումով կրնան հեռահեռէ շտկուիլ։ Սակայն ցաւալին այն է որ աչքի կը զարնեն այն տեսակ թերթի թիւները, այլ, — ժառանգական արտերը առհասարակ մեր հայ մամուլին — որոնք կտակածելի կընեն նոյն իսկ իր յայտարարած ուղղութեան անկեղծութիւնը։

Յիշելով նուազ փայտի մահուան սութիւ թերթերու մրցումի մը ձեւ առած շուրջ ներքուկանները, Պ. Մմբատ իբրև ուշ մտացած յայտնած է թէ կը բտականանայ զետեղելով մեծ գիտանազետին մահուան լուրին թարմ տպաւորութեանը տակ իր գրած մահերգը հանդէսին Ա. թիւին մէջ։ Այդ մահերգը թերևս մեր ուշագրութիւնը չը գրաւէր կամ հոս չը ծանրանայինք այդ մասին՝ եթէ նախապէս ասոր արամազօրէն հակառակ իր անձնական համոզումը լսելու առիթը ունեցած չըլլայինք, բայց հիմա երբ կտակի փառ տարաձայնութիւնն ալ լսեց, չենք գիտեր ի՞նչ պէս մեկնելու է թրքական արտաւոյ «տէսթան»ները յիշեցնող

այդ տղերքը։ Եթէ ինք ալ դեռ աներեսութեամբ իրենց ճամարտակութիւնները շարունակող մեր կարգ մը շողմարար խմբագիրներու մրցումին ուղած է մասնակցիլ, կը խոստովանինք որ մրցանակը շահած է իր այս յանգաւոր շողմարարութեամբ, մանաւանդ սա վերջին տունով։

Բահայցը մտաւ հայուն, մտք է ճամբան, փայլանուար պիտի գիտնէք զէպի դամբան, Ալեկոծիկ ազգի մը նաւը խրեցաւ, նաւակայքի փարոսին ըստ մարտիցաւ, Լանք, լայն չը գողրինք, Զինուպար թոս՝ երկինք։

Վա՛խ, վա՛խ... բայց «Փիւնիկ» ալ թեւեր ունի...

Այնուհետեւ իր Աղագային Գրութիւնի մէջ հրատարակելով իր մը պէս կտակէ թէ Հալէպէն ստացել է Մա, աչ թանտարկուած «հայրենասէր» փաստաբանին հարցաքննութեան օրինակը, զոր մաս մաս պիտի հրատարակէ յառաջիկայ թիւերուն մէջ։ Այդ հարցաքննութիւնը, որ ժամանակին խնդիր եղած և շատ անխորժութիւններու տեղի տուած է երկրին մէջ, չենք գիտեր թէ ի՞նչ հարկ տեսած է հրատարակելով վերտոին արծարծել թրմրած կիրքերը, և շտոյնել արգէն իսկ բարդ պայքարները։ «Անձնական փոքրութիւններ» զերծ մնալու իտուտումին հետ մէկտեղ, ոեւէ հանրային կարեւորութեան զուրկ այսպիսի անախորժ խնդիր մը հրատարակ նեւական մըն է «Փիւնիկ»ի ապագային համար։ Մինչդեռ մենք պիտի մաղթէինք որ ան եթէ իր անուանակից թռչունին չափ եր-

կարակեաց ալ չըլլայ՝ գէթ այնպիսի տպաւորութիւն մը թողու հասարակութեան վրայ, որ իր անխնայ կարենայ նոր «Փիւնիկ» մը արտադրել։

ԿԱՐԻՃ

Լոսան, 31 Մարտ

Անգլիոյ միգրացիոն երկնից տակ ալ բաւական հայեր ունինք, որոց մեծ մասը վաճառական են, զիտաւորակէս Լոսանօնի և Մանչէսթրի մէջ։ Մանչէսթրի հայերը ունին փաստաւոր եկեղեցի մը և ուսեալ քահանայ մը որ զգաւորաբար իր պառժուս հասին լաւ յարմարած է։

Լոսանօնի հայերը զուրկ են եկեղեցիէ, որն թերցարանէ և կրթական հաստատութիւններէ, ու բոլորովին անտարբեր են զէպի հայ կարօտանները։ Ի՞նչ է ազգութիւն, ի՞նչ է հայրենիք. «Le monde est ma patrie»։

Մի քանի տարի առաջ ընթերցարան մը հաստատեցին որ տարին երկու անգամ բաց էր ժողովրդեան առջև, բայց զգաւորաբար այն ալ գոցուեցաւ պարտքի տակ։ Որչափ որ Լոսանօնի հարուստ գասակարգը անտարբեր է, սորա հակառակ հայ ուսանող և գործաւոր գասակարգը իրենց կարողացածին չափ կը ջանան կրթական և ինքնազարգացման միջոցներ որոնել։

Վեց ամիս առաջ հայ գործաւորաց և ուսանողաց միութիւն մը հաստատեցին որ իր յատուկ ժողովասեղին ունեցաւ, ուր ամէն շաբաթ երկուր կը հաւաքուին։ Այս միութիւնը ունեցաւ իր ծրագիրը որ հետեւեալ չորս նպատակները կը պարունակէ։

Ա. — Հայ գործաւորացի և ուսանողաց մէջ սերտ կապեր հաստատել։

Բ. — Անոնց համար կրթական և ինքնազարգացման միջավայր ստեղծել միասին խորհրդակցելու և ազգային ու ընկերական նիւթերու վրայ մտքեր փոխանակելու։

Գ. — Միասնաբան անոնք զազոթութիւն միւս անգամներուն հետ յարաբերութեան գնել։

Դ. — Միութիւնս կարողացածին — ի՞նչ ևս ասում, դու, Սուրէն, այստեղ, երբ կցկատուր կերպով արտասանեց Վահէն և փաթաթվեց վրդով ու մի քանի վարկեան խոնաւցած աչքերով ինձ դիտելուց յետոյ, շարունակեց։

— Ես ևս փոխվել, Սուրէն, շատ ճանաչել անկարելի է, նստինք, մի քիչ խօսինք, յիշենք անցեալը։ Եստ ուրախ եմ քեզ հանդիպելուս համար, կեանքիս լաւ օրերը, եթէ երբէք զբանք եղել են, միտքս ընկան։ Պատմիր ինձ քո մասին, երանի քեզ, ապրեցիր, զգացիր թէ ինչ է կեանքը։ Ես մեռնում էի, կամաց կամաց, աւելի ճիշդը ինձ մեռնում էին։

— Չէ, այստեղ չը նստինք Վահէ, գնանք վերեւ, աւազանի մօտ, թէյ պահանջենք և խօսենք։ Դու այնտեղ կը պատմես քո մասին, Ես քո մասին ոչ մի անգամ չեմ շուրջ իրար չենք սեսել, քիչ ժամանակ չէ՛ր։

— Եստ լաւ, գնանք, պտտախօսանք Վահէն։

Ս. — Ես մենք, թեւ թեի տաւ, զէպի վեր բարձացանք ուր մտւոր ծառուղիներով։ Մենք հանդիպում էինք շատ տիկնանց, օրորդներին և պարոններին, Տիկնիկ հայ ինտելիգենտ շրջանից, Եստերը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ԶՈՅ

(ԵՐՈՒԱՆԻ ԴԱԶԱՐԵԱՆԻ ՅԵՆԱՍԱԿՆԻ)

189՝ թիւ օգոստոսի խնդրող, ճընշող երեկոններից մէկն էր։ Սենեակում անկարելի էր նստել, շունչ առնել չէր լինում։ Բացի այդ, և տխուր էի առանց որ և է պատճառի, Յանկարծ միտքս ընկաւ բուսաբանական պարտէզը, Տիկնիկի այդ հրաշալի անկիւնը, մանաւանդ ամբարն երեկոյին։ Էլ ժամանակ չը կորցըրի, իսկոյն դուրս եկայ և քայլերս ուղղեցի զէպի Սոյուզկի սարը, որի ետեւում, ձորի մէջ, քամիներից բոլորովին պաշտպանված, զետեղված է հրապուրիչ և բանաստեղծական պարտէզը, Բարձրանում էի սովորական ուրտաները թողած, կարող ճամբով, գրեթէ ուղիղ գծով և այդ պատճառով յագնում էի շուտով, կանգնում ու քաղաքի վրա նայում։

Կովկասի մայրաքաղաքը պարզ երեւում էր, Կարծես բոլոր մէջնէր, ինչ որ ամպի պէս մի բան, փոշիկողորշիկ գանգված, արկի էր քաղա-

քի մթնոլորտի վերի մասերը, այդ զանգվածի միջից հազիւ երեւում էին ամենաբարձր տեղերում շինված եկեղեցու փարիլուն խաչերը, Բաւական նայելուց յետոյ՝ կրկին շարունակում էի բարձրանալ, վերջապէս հասայ պարտէզը։ Ներս մտայ, երկար տարիներից յետոյ, վառվառն յիշատակներով լի այդ պարտէզը, և բնազգմամբ գնացի զէպի սիրածս վայրը, փոքրիկ ջրվէժի մօտ։

Միտքս է այդ ջրվէժը, յստակ ջրի թափով վայր իջնելը և ժայռերին զարնվելուց միլիոնաւոր արծաթազած ցօղբի բաժանվելը ինձ միշտ հմայում էր։ Նրա ուժգին ու զնգզնգան խոխոջը անցեալում ինձ եռանդ, ուժ էր ներշնչում և հազար ու մի տեսակ երազների մէջ սուզում։

Ահա ականջս ընկաւ ջրվէժի յուժկու ձայնը, զլուխս բարձրացրի, հասել էի, աչքերս ուղղվեցին ճիշդ իմ սիրած փոքրիկ քարաժայռին։ Բայց նա պարսպ չէր, նրա վրա մի ուրիշն էր նստել, նիհար, կարծես օրերով անօթի մնացած, գրեթէ ազգատիկ հագնված, սրացած զէմքով, մոխրագոյն աչքերով և բաց շագանակագոյն մազերով մի պարոն։ Անձանօթը գրաւեց ուշագրութիւնս, նա երազող վիճակի մէջ էր, աչքերը ջրվէժի փրփրաղէզ յորձանքին յա-

նած՝ երկար իմ ներկայութիւնս չը նկատեց։ Վերջապէս, գոցեց յամառ նայած քիցս ազդված՝ իմ կողմը նայեց և հանդիպելով աչքերիս՝ աւելի զգուհեց։ Նրա չէկ և նոսր յոնքերը ժողովեցին, կարծես բարկացաւ, ինչ որ քիչ մէջ փնթիթիթաց և կրկին ջրվէժին նայեց։ Անձանօթը ինձ աւելի հետաքրքրեց և ես շարունակեցի ուշի ուշով անողել նրան։ Նա զգում էր որ ես շարունակում եմ իրանով զբաղվել, երբեմն գողուցի ակնարկներ էր գցում իմ կողմը, որոնք հեռզնեակ խտանում էին։ Վերջապէս համոզվելով որ ես շարունակելու եմ, կանգնեց և մի շարած նայածք գցեց զլուս։ Նրա աչքերում կարողացի — ի՞նչ ևս ուղում։

Ճանաչեցի, ի դուր չէի նայում, դա իմ վաղեմի բարեկամ Վահէն էր։ Էլ ժամանակ չը կորցրի, ցատկեցի նրա մօտ և ուրախութեամբ բացականչեցի։

— Բարով, Վահէ, հազիւ ճանաչեցի, անաչէն։ Որչափ փոխվել ես։ Վահէն աւելի խոժոռվեց, ևս ետ գնաց և շատ ցուրտ կերպով պատասխանեց։

— Ներեցէք պարոն, ևս ձեզ չեմ ճանաչում, դուք ո՞վ էք։

— Անունս սուր։

չափ պիտի ջանայ նիւթապէս եւս օգտակար լինել այն անդամներուն որք օգնութեան կարիք կը զգան :

Վերջին նպատակը առայժմ անգործադրելի է նիւթական անձկութեան պատճառով : Վարդանանց սխրալի սենին աստիճան հայ գործաւորներու եւ ուսանողներու միութեան նախաձեռնութեամբ հանդէս մը տրուեցաւ ի ներպատ միութեան : Հանդէսին ներկայ էին հայեր եւ անգլիացիներ : Պարագային յարմար բանախօսութիւններ եղան երկու լեզուներով : Օր. Պոյաձեան անգլիերէն լեզուով համառօտակի բացատրեց Վարդանանց պատերազմը եւ նպատակը : Հայերէն եւ անգլիերէն երգեր երգուեցան : Յիշատակութեան արժանի են երկու ջոկակները անգլուհիները . Օր. Քէյթ եւ Օր. Թըյալ . առջինը անց «Հովութի պար»ը իսկ երկրորդը «Ողբերու ոօնօն»ն հիանալի կերպով : Հայ տիկին մը պաշտակի վրայ մի քանի կտոր թրքական Լզանակներ անց, իսկ հայ օրիորդները եւ պարսկերէնը իրենց երգած պզգային երգերով փայլ մը տուին հանդէսին : «Տէր կեցող»ով հանդէսը փակուեցաւ եւ հանդիւականները լաւ տպաւորութեան ասկ մեկնեցան :

Հայաստանէն եկած լուրերուն նայելով սոսկալի սով կը տիրէ հոն եւ սովամահի դէպքեր կը պատահին : Հայկական նպատաստացի նախագահ Ռէսիմիսիդի գուբըր Տ'յիլիզի եւ գրեթէ բոլոր զիւստոր թերթերու գրած երկար նամակով մը կը նկարագրէ, զգայուն շնորհով Հայաստանի սովահաներուն արգահատելի վիճակը եւ կը վերջացնէ իր նամակը յայտարարելով թէ ուրախ պիտի լինի հետագրով Արք. Օ'Քոնորի զրկել այն գուժարները, որք իր հասցէին կը խրկուին ի նպատ հայերու :

Թղթակից մը Տէյլի-Նիլզի կը գրէ թէ կաթոլիկ Ազարեան Պատրարքի . Պապի արժանաւոր գաւապին, մասը կայ որբանոցները փակելու խնդրոյն մէջ : Ազարեան գաղտնի Վահէին բարեւում էին : Բայց Վահէին զօւարտութեամբ, գրեթէ ակամային էր պատասխանում բարեւոյններին : — Ինչ շատ ծանօթ ունեւս Վահէ, եւ բոլորն էլ լաւ շրջանից : — Հը՛, այո՛, լաւ շրջանից . բայց բոլորը աղտոտ, կեղծ, անպաշտ, գոռոզ . գրանցից ոչ մէկը ինձ չէ յարգում եւ ես ոչ ոքին . բայց բարեւում են : Ես էլ դրանց շրջանից եմ, միայն սոված տեսակից : — Ի՞նչ եւս ասում Վահէ . որչափ չար ես, միթէ բոլորն էլ վատ են : — Քեզ համար ի հարկէ ոչ, զուգրանց չես ճանաչում եւ գուցէ ժամանակ էլ չունենաս ճանաչելու : Ծանկալի է որ երբեք չը ճանաչես : Դրանք ժամանակի յարմար մարդիկ են . մարդկանց աչքից փոշի փչողներ . . . Վահէի խօսակցութեան ձեւը ինձ վրայ շատ ճնշող ապաւորութիւն թողեց . զգացի որ առջեւս հասարակութիւնից դժգոհ եւ հալածված մէկն էր գտնվում : Պատասխան չէի գտնում նրա ասածներին . նեղվում էի, իսկ նա սուր կերպով, երբեմն ծոկով ուղիղ նայում էր աչքերիս մէջը . կարծես ուզում էր հասկանալ թէ իր խօսքերը ինչ ապաւորութիւն գործեցին վրաս : Վերջապէս հասանք բիւֆէն . նըս-

յարարեութեան մէջ է Բ. Դրան հետ եւ իր նպատակն է անօգնական ձգել հայերը որպէս զի սովէն մղեալ կաթոլիկ ըլլան . ինչպէս այսօր տեղի կունենայ Վան : Թղթակիցը կոչում կ'ընէ ամէն անոնց որք գրիչ բռնել զիսեն, գիմել կառավարութեան որպէս զի հայկական խնդիրը խորհրդարանին մէջ վերստին արծարծուի : Վանի Անգլիական հիւպատոսէն եկած նամակին համաձայն հոս միութիւնը մը կ'ազդուեցաւ, որուն նպատակն է աղերսել Չարին որ հայ գաղթականները չը վերադարձնէ իրենց տեղերը : Այս միութիւնին մէջ խորին ցաւ յայտնեցին որ Թագուհիին աղան, Ուէլլզի իշխանը, «Մեծ Մարդասպանին» այցելութեան պիտի երթայ :

Հայկական նպատաստացի ընկերութիւնը բաւական օգնութիւններ բրած է հայերուն եւ մինչեւ ցարդ օգնելու կը ջանայ . բայց կան հոս որիչ երկու հայկական ընկերութիւններ, որք մազի չափ օգուտ չունին եւ չենք գիտեր թէ իրենց հաւաքած գրամները ի՞նչ կ'ընեն :

2510 ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

Սաթուռեան Գարեգին վարդապետ եւ երեք քահանաներ զատ բացած էին «Մշակ»ի խմբագրին եւ անոր մէկ աշխատակիցին դէմ, որովհետեւ Գանձաբարէն գրուած մի նամակ վերադարձրէր էր իրենց բարի համբաւը եւ պատիւը : Ամբատանեայները յայտարարեցին թէ իրենք պատրաստ են ապացուցանել թէ Գարեգին վարդապետ կաշառակերութեան, զեղծումներու եւ կեղծիքներու մէջ գտնուած է, եթէ Սինոդը տայ իրենց ուղած մէկ քանի պաշտօնագիրները : Դատարանը յետաձգեց զատը եւ որոշեց վկայական տալ անոնց՝ հարկաւոր վաւերա-

սեցինք մի սեղանի մօտ եւ թէյ պահանջեցինք . մինչեւ թէյի բերվելը լուռ էինք : Թէյը բերին, սկսեցինք խմել . բայց ճնշող լուսթիւնը շարունակվում էր : — Ինչո՞ւ ես լուռ, Սուրէն, ասածներս վատ ազդեցին վրադ այո, ճիշդն ասա : — Ես չարած եմ, Վահէ, զուշատ բարի էիր առաջ, լուստես, մարդասէր : Բայց հիմա, ուրիշ ես, բոլորովին տարբեր մարդ, գրեթէ չար, խայթող : — Հա, ի հարկէ բոլորովին ուրիշ եմ, եթէ կուզես չար : Միթէ իմ մարմինս նոյն է, ինչ որ առաջ էր : Չես տեսնում նախկին Վահէի քայքայված մեացորդը, աւերակը, ուրւականը : Գիտես թէ իմ վերջին տաս տարւայ կիսանքը սանձանքի, յուսախարութեան օրերի արիւնտ չղթայ է, որ ամբողջովին փաթթվելով ինձ, սեղմում, խեղդում է եւ ամեն օր մի արիւնտ օղակ աւելցնելով կրկնապատկում իմ տանջանքները : Եւ ո՞վ է կոռում, հիւսում այդ իմ մտի մէջ խրվող չղթան, հասարակութիւնը, միջավայրը, ուր ստիպված եմ ապրել : Մի խօսքով ամենքը, եղբայր, ընկեր, բարեկամ : Այո, այս ամբողջ ժամանակամիջոցում վարդ փնտոցի,

զիրենքը ստանալու համար Սինոդէն :

— Լույլ, ախ Սուրամ քաղաքի ստիկանապետը զատ բացած էր «Նովոյէ Ապուրէնիւն» թերթին թղթակցին դէմ որ Սուրամի հայկական եկեղեցիին ալ երեսփոխանն էր : Թղթակիցը դրած էր թէ ոստիկանապետը ստիպած էր Սուրամի հայոց քահանան կրճատել եկեղեցական արարողութիւնը շրջահանքի օրը : Դատարանը երկու ամիս բանտարկութեան դատապարտեց թղթակիցը :

— Լուծուած Միացեալ Ընկերութիւնը որ երբեմն Հայաստանի մէջ 45 վարժարան ունէր, որոց թիւը վերջերս 21 իջած էր, 600 ոսկի պարտք ունի : Պատրիարքարանը կաշխատի այդ պարտքը վճարել պահանջները գանձելով : Կերեւի թէ այս ընկերութեան գործերը բարելոնեան խառնակութեան հասած են, 100 ոսկի փոխարէն կարգ մը արժէթղթեր գրաւի գրուած էին, զորս կարելի եղար է ապատել : Կ. Պոլսի ազգային շրջանակներու մէջ լուր կը տարածուի թէ զեղծումներ գործուած են :

— Շապին Գարահիսարի նախկին տեղապահը, Տ. Ամբրոսիոս վարդապետ, որ իր հուշակաւոր համարատուութեան համար պաշտօնազուրկ եղած էր, սունական օրերու առթիւ ազգային Հիւանդանոցի մէջ պաշտօնավարելու արտօնութիւն ստացեր է : Կը թուի թէ շորթած գրամները մարտուեր են :

— Իզմիրեանց կտակի յանձնաժողովը նիստ գումարեց եւ զբարեցաւ այս տարի մրցումի դրուելու համար ներկայացուած

չուս ինձնից . քծնել, ստել, վերջապէս զոհել ամեն բան ինչ որ ինձ համար սուրբ է : Ես այդ չեմ անում եւ ինձ պիտիօպաս են անուանում : Վահէի խօսքերը սակզի պէս ցրցվում էին սրտիս մէջ : Գլուխս սկսեց պարտվել . թէյի համար վճարեցի եւ մենք ճամբայ ընկանք զէպի տուն : Այդ գիշերը միայն անցկացրինք : Սուստեան սիրով բաժնիկեցինք : Վահէն սեղմեց ձեռքս . կարծես մի քիչ հանգստացած լինէր : Կարճ ժամանակից յետոյ ես հեռացայ Տփլիսից : Ութ ամսից յետոյ իմացայ որ Վահէի ւովից ուժասպառ մարմինը, չը գիտնալով մի պատահական հիւանդութեան, զոհ էր գնացել մահւան մի ազգատիկ սենեակում : Կովկասեան ազատամիտ մամուլը, որի մէջ նա վերջին տեղը չէր բռնում, փոքրիկ սեւ շրջանակի մէջ յայտարարում էր Վահէի մահը նրա ազատամիտ բարեկամներին կողմից՝ եւ բոլոր ծանօթներին ու յարգողներին հողհիանգատի հրաւիրում . . .

զիրքերու քննութեամբ : Տեսնենք ի՞նչ նոր կատակերգութիւններ պիտի խաղցուին :

— «Միութիւն»ի մէջ կը կարգանք թէ երեւելի հայ բարերար մը խոստացած է 20,000 ոսկի տալ ազգային յեղափոխութեան համար, եթէ հրապարակը մաքրուի եւ յեղափոխական անկեղծ եւ անշահախնդիր ուժերը միանան : Կը խոստանայ նաեւ այդ պարագային, կարճ ժամանակամիջոցի մը մէջ, 80,000 ոսկի հաւաքել իր գաղափարակիցներէն : Երա՞նի թէ ապրիլ 1ի խաղ մը չըլլար աւիկայ «Միութիւն»ի գլուխին :

— Սերպիոյ սակաւթիւ հայերը 260 ֆրանք հանգանակած են Վանի սովածներուն համար եւ շրկած են Կ. Պոլսի Պատրիարքին :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄԵՐԻԿԱ, ՔՈՒՊՍ. ԵՒ ՓԻԼԻՊԵՆՆԵՐԸ

Երբ Ամերիկեան ազգը իր զօրեղ հարուածները իջեցուց Սպանիական անարդ բռնակալութեան գլուխին եւ ազատեց Գուպան, Փորթօ-Րիքօն եւ Փիլիպեանները, բոլոր ազատական եւ շարժարուած ազգերը երախտադիտութեամբ լեցուեցան զէպի ամերիկեան մեծ ազգը : Յուսացին թէ օր մը նոյն օգնութիւնը իրենց ալ կըրնայ հասնիլ : Հայաստանի կոտորածներէն, Կրէտէի եւ Յունաստանի աւերումներէն յետոյ, առաջին անգամ տեսանք ազգ մը, որ վեհանձնօրէն իր քաջարի շինարարներու կեանքը եւ իր միլիոնաւոր տոլարները կը գործածէր զուտ մարդասիրական գործ

41170

մը կատարելու : Ծերակոյտը վե-  
հօրէն կը յայտարարէր թէ ա-  
մերիկեան ազգը երբէք պիտի  
չը գրաւէ Քուպան , այլ զանիկոյ  
ազատելով , պիտի դնէ ազատ և  
անկախ երկիրներու շարքին  
մէջ :

Այսօր տակաւին այն համոզու-  
մը ունինք թէ ամերիկեան ազ-  
գին ստուար մեծամասնութիւնը  
չուզեր իր այս վեհանձն գործէն  
նիւթական շահ հանել , և երկիր-  
ները գրաւել այնպիսի ազգերու ,  
որք տանեակ տարիներէ հետէ  
իրենց ազատութեան համար զո-  
հեցին հազարաւոր կեանքեր , և  
սովացին անվերջ թշուառու-  
թեանց : Սակայն , Մաք-Քինլի և  
իր կառավարութիւնը , որք մինչ-  
չեւ իսկ ամերիկեան զինուորնե-  
րու մահուան պատճառ եղող  
գրամատէրները կը հովանաւո-  
րեն , և Մայլզի ու Շլայի նման  
աննման զօրավարները կը հալա-  
ծեն , բոլորովին տարբեր մա-  
ծումներ ունին : Քուպայցիք ան-  
համբեր կըսպասեն ամերիկեան  
զօրքերու մեկնումին , որ կուշա-  
նայ : Իսկ Փիլիպեան կղզիներու  
մէջ ամերիկեան կառավարու-  
թեան հրամանով , ահագին բանակ  
մը կը զարնէ , կայրէ , կը կստորէ  
Ակինալայոյ քաղաքը , որք , կա-  
տարելապէս մարդուած զինուոր-  
ներու պէս , կը մաքառին իրենց  
հայրենիքի անկախութեան հա-  
մար :

Թո՛ղ Մաք-Քինլի և իր նախա-  
րարները բարձրաձայն պոռան  
թէ Փիլիպեան ապոտամները  
կէս-վայրենի ցեղ մըն են , ան-  
կարող իրենք զիրենք կառավա-  
րելու : Ակինալայոյ բանակին  
կազմութիւնը , երկարաուել և  
յուսահատական ճիգերը , սպանե-  
րու և զինուորներու քաջութիւնը ,  
իրենց զէնքերու տեսակը—բո-  
լոր ասոնք կը վկայեն լիւրջ թէ  
անոնք կէս-վայրենի ցեղ մը չեն ,  
թէ կրնան իրենք զիրենք կա-  
ռավարել և թէ Մաք-Քինլի պար-  
զապէս բռնուած է խաբեբայու-  
թեան և աւազակութեան ար-  
տէն :

Մենք տակաւին կը յուսանք  
թէ ամերիկեան մեծ ազգը խմբո-  
վին պիտի ապստամբի Մաք-Քին-  
լի և ներկայ կառավարութեան  
միջոցներուն դէմ , և թէ վեր-  
ջապէս այսչափ պարապօրէն  
թափուած արիւնէն յետոյ , թէ՛  
Քուպա և թէ՛ Փիլիպեանները պի-  
տի փայլին ազատ և անկախ եր-  
կիրներու շարքին մէջ :

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Կ. Է.—Տօրչէսթըր . — Ձեր թեր-  
թը սկսանք զրկել , Փոստաբէնը մընի  
օրաբրով :  
— Մ. Ս. Դ.—Քարիդ . — Մենք  
տեղեկութիւններ կը սպասէինք , ոչ  
թէ խորհրդածութիւններ :  
— Յ. Մ.—Պէտն . — Ձեր ուզած-  
ները չունինք :

—).—

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պուլկարական պանքայի 1898ի  
հաշիւները հրատարակուած են ,  
որմէ կերեւայ թէ անցեալ տարի  
1,276,608 ֆրանք զուտ շահ մը  
գոյացած է : Այս շահը 20,901  
ֆրանք աւելի եղած էր անցեալ  
տարիէն : Ըստ կանոնի , այս գու-  
մարին հարիւրին երեքը բաժ-  
նուած է բոլոր գործաւորներուն  
և պաշտօնեայիններուն , հարիւրին  
տասը անցած է պահտի գու-  
մարին , և հարիւրին ութսունը  
եօթնալ հանրային գանձին յանձ-  
նուած է :

— Իվանօֆ եղբայրները դատ-  
բացած էին «Նով-Օթլիվ» թեր-  
թին դէմ , որ ամբաստանած էր  
զանոնք թէ հայրենասիրական  
գիւմակի տակ , աւազակային խում-  
բեր կը կազմէին և Մակեդոնիա  
կանցընէին Գատարանը անպարտ  
արձակեց Օթլիվի պատասխանա-  
տուն :

— Կրթական և գտնական նա-  
խարարները Սօֆիայէն Ձարի-  
պրոս , Ռատոմիր և Քիւսթէնտիլ  
գացած են , մերձակայ ընտրու-  
թեանց առթիւ :

— Ռոման Փլէֆլայի երկաթու-  
ղիի գիծը աւարտած ըլլալով ,  
մասնաւոր յանձնարարութեամբ մը զըր-  
կուած է զայն քննելու :

— Ձինս թափի վեհաժողովին  
Պուլկարական ներկայացուցիչը  
պիտի ըլլայ Մ. Մարքո Պալապա-  
նօֆ , երբեմն արտաքին գործե-  
րու նախարարը : Մ. Սթոյան  
Միխայիլովի և գնդապետ Ա-  
կուրա պիտի օգնեն անոր :

— Մ. Սիւրմաճիէֆ մերժած ըլ-  
լալով Կ. Պոլսի Պուլկարական  
գործակատարի պաշտօնը , Պուլ-  
կար կառավարութիւնը առժամա-  
պէս զրկած է հոն Աթէնքի գոր-  
ծակատարը , Մ. Տիմիթրօֆը ,  
մինչեւ որ ուրիշ մը ընտրուի :

— Քիւսթէնտիլի , Տուպնիցա-  
յի և Սթանիմաքայի մէջ քաղա-  
քապետական ընտրութեանց ժա-  
մանակ , ազատական կուսակցու-  
թիւնը շահած է : Իսկ Էսքի-Ճու-  
մայի մէջ ազատականները երկու-  
քի բաժնուած ըլլալով , պահպա-  
նողականները յաջողած են :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՆՎՈՒՄ . — Եւթնէնէն կը ծա-  
նուցանեն թէ արուպ ապստամբ-  
ները ջարդեր են ամբողջ վաշտ  
մը թուրք զօրքեր , և ստիպեր են  
Ապոուլլահ փաշան դէպի Մանաս  
քաշուիլ :

— Եւրոպական դեռպաններու  
ժողովին մէջ որոշուեցաւ համի-  
մաստ ծանուցագիր մը աւել Գրան  
մաքային արգելքներու մասին ,  
որոնց պատճառով եւրոպական  
վաճառականութիւնը կը փլասուի :  
Եթէ Գուռը մտիկ չընէ , զեք-  
պանները իրենց կառավարու-  
թեանց պիտի դիմեն :

— Թուրք կառավարութիւնը

խնդրած է պետութիւններէն , որ-  
պէս զի Քանտիայի վերջին կու-  
տորածներու մասնակցող խաւա-  
ներուն ալ ընդհանուր ներդու-  
թիւն ըլլայ :

— Ծովային և պատերազմական  
նախարարները , յիշատակագիր մը  
տալով Սուլթանին , կը յայտնեն  
թէ նահանգներու տուրքերուն  
գանձումը , ըստ Ռուսական կա-  
ռավարութեան առաջարկին , Օս-  
մանեան պանքային յանձնուիլը  
չատ ֆլաս պիտի տայ երկու նա-  
խարարութեանց գործառնու-  
թիւններուն :

— Անգլիոյ կառավարութիւնը  
բողքած է Հայտար-Փաշայի առ-  
ջեւ նուահանգստի մը շինու-  
թեան համար տրուած արտօնու-  
թեան դէմ :

— Եռեսուն թուրք սպաներ  
որք Պէոլին երթալու համար վա-  
կոններու մէջ նստած էին ,  
յուրս հանուեցան Սուլթանին  
մասնաւոր հրամանով : Պատճա-  
րը չի գիտցուի :

— Բաղմաթիւ Թուրքեր ձեր-  
բակալուած են Կ. Պոլսի մէջ ,  
Մուրատ պէյ որ բանտարկուած  
էր , ազատուելու է : Եստ մը նշանա-  
ւոր Թուրքեր Եւրոպա փախած  
են :

Փիլիպինալները . — Ձօրավար  
Բիոս կը հեռագրէ թէ , զօրավար  
Օթիսի հետ միջոցներ ձեռք ա-  
ռած է սպանիացի զերինները ազա-  
տելու համար : Պատգամաւոր մը  
զրկուած է Ակինալայոյ այս մա-  
սին : Ձօրավար Օթիս 1,500 փի-  
լիպեան ապստամբ զերիններ  
սպանիացի զօրավարին տրամա-  
դրութեան տակ զրած է փոխա-  
նակութեան համար :

— Փիլիպեան պատերազմը կը  
շարունակէ : Ձօրավար Լօթըն  
զրաւած է Լօնկոս և Փաէթ քա-  
ղաքները Ապոտամները թնդա-  
նօթակիրներու կրակին չը դիմա-  
նալով , ետ քաշուած են : Ապրս-  
տամբները զրաւած են սպանիա-  
կան թնդանօթակիրներու զէն-  
քերը և թնդանօթները զորս  
տակաւին Ամերիկացիք ժամա-  
նակ ունեցած չէին գրաւելու :

ԿրէՏէ . — Սիւալէ այն լուր թէ  
Եօրկիոս իշխան պիտի այցելէ  
Սուլթանին , Ընդհակառակը շատ  
զժգոհ է անկէ , վասն զի Թուր-  
քիա ամէն ստորին միջոցներ կը  
գործածէ կղզիին բարեկարգու-  
թեան և հանդարտութեան ար-  
գելք ըլլալու համար : Իշխանը  
խնդրած էր տէրութիւններէն որ  
իրենց հիւպատոսները գործակա-  
տարներու փոխեն , ինչպէս Պուլ-  
կարիայի մէջ , բայց առայժմ  
մերժուած է : Գերմանիա մտա-  
գիր է հիւպատոսութիւն մը հաս-  
տատել Կրէտէի մէջ :

ՅՈՒՆԱՍՏԱՆ . — Մ. Թէօթօքիս ,  
Թրիքովիտի յաջորդը , կազմեց  
նոր նախարարութիւնը որ օրի-  
նական երդումը ըրաւ : Մ. Ձայի-  
միսի ընտրութիւնը վաւերաց-  
ուեցաւ խորհրդարանէն , բայց

որովհետեւ ժողովը իրեն առե-  
նապետը ընտրեց հակառակ կու-  
սակցութեանէն , Մ. Ձայիմիսի նա-  
խարարութիւնը հրաժարեցաւ :

ՍԱՄՍՈ . — Ծովակալ Սամսոն  
հրաման ստացած է իր կառավա-  
րութեանէն Նիուարք զրահաւորը  
Սամօս զրկել : Երեք պետութիւն-  
ները կաշխատին համաձայնիլ :

Ա.Ձ.Գ

Յառաջիկայ սեպտեմբերին պիտի  
բացուի Վառնայի մէջ Ա. Ամիրխան-  
եանցի անօրինութեամբ օրիորդաց  
Հայկական դպրոցը , ուր Օր. Լ.  
Ամիրխանեանց գլխաւոր վարժուհիի  
գերը պիտի կատարէ :

Ուսանելու սովորական առարկա-  
ներէն զատ , եւ բացի Հայերէն , և  
Պուլկարեան լեզուներէն , որք պար-  
տաւորիչ պիտի ըլլան , կան նաեւ  
Տրանսերէն , Գերմաներէն և Անգլի-  
երէն լեզուները :

Գիրները՝ ամսական 10 . 6 և 3 լէվ ,  
Գոշնակ—ամսական 15 լէվ 8 դասի  
համար :  
1—6 Տնօրէն  
Արք. Ամիրխանեանց

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ , ՆՇԱՐԺՈՒՄԱԻ

Կը պարզուին ամէն լեզուէ  
այցեատուն , հասցեատուն , նամա-  
կագրութիւն , հարսանեկան հրաւի-  
րագիր , մահազգ , ինչպէս նաեւ  
պրօշիւններ :

Գիրները յոյժ զիւրաւանայելի :  
Ուրիշ քաղաքներէ եկած  
յանձնարարութիւններ ճշգու-  
թեամբ և փութով կը կատար-  
ուին :

Ա.Ձ.Գ

Հայ հասուն երիտասարդ մը որ  
գիտէ հաշուապահութիւն , ծանօթ է  
ստեղծերէն և զաղղիերէն գրակա-  
նութեան , կուզէ պաշտօն ստանձնել  
վաճառատան մը մէջ զիւրաւանայելի  
վարձատրութեամբ , կը համաձայնի  
նաեւ պարզ գործակատար ըլլալ :  
Դիմել խմբագրութեանս :

ԲԱԶՄԱԿԷՊ

Ա Մ Ս Ա Թ Ե Ր Թ  
57րդ Տարի  
Տարեկան գին՝ 10 ֆր . — 4 բուպ-  
լի . — 2 Տոլար :  
Հասցէ՝ Բէտաքսիոն տը լա ուղի-  
Բազմալէպ . Ս . Կազար :  
Վընիկ (Իթալի)

ՊՕՐՍԱ

Վառնա 10 Ապրիլ  
ՊՈՒՂՏԱՅ  
Վաղօն , լիպրա 55—58 , հէքթօլ .  
9.10—9.90 ֆրանք  
Արապա , լիպրա 55—60 հէքթօլ .  
9—11 ֆրանք  
ԱՐԲԱ  
Լիպրա 42—50 հէքթօլ . 6.10—6.40  
ֆրանք  
ՄԻՍԻՐ  
Վաղօն , 55—57 լիպրա , 5.75—5.85  
Առապա , 55—60 լիպրա , 6.10—6.20  
Կիւնտէ 15—20 վաղօն , 25—30 առապա  
կէլմէքէ տիր :  
ՏԱՐԸ  
Կիւնտէ 1—2 արապա կէլմէքէ տիր .  
58—60 լիպրա , 5.40—5.80 ֆրանք  
Առապա մուսալէլէի նարուէն 21  
ֆրանք հիսապը իլէ տիր :

Отговорникъ : А. СУКЛЯСОВЪ  
Печатница „Взаимность“ Варна .